

ՄԻԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ

ՄԱՀՈՒԱՆ 200 ԱՄԵԱԿԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

(Վեկտիկ 8-10 Սեպտեմբեր 1950)

ԺԱՄԱՆՈՒՄ

Սեպտ. 5, երեքշաբթի իրիկունն է. մու-
թին մէջէն, ժամը 10ի ատենները յանկարծ
Վենետիկի խաղաղ լճակին մէջ կը տա-
րածուի Ս. Ղազարի զանգակներու ուրախ
ղօղանջը. շոգեմակոյկ մը կը մօտենայ ու
կանգ կ'առնէ կղզիի քարափին, ուր հա-
ւաքուած են վանքի բոլոր ՎՎ. Հայրերն
ու աշակերտութիւնը:

Ն. Վ. Տ. Ծիրանաւոր Գրեգոր Պետրոս
ԺԵ. Աղաճանեան Կաթղ. Պատրիարքն է
որ կը հասնի՝ փառաւորելու Մխիթար
Աբբաճոր նուիրական յիշատակը, և նա-
խագահելու յորելնական հանգէսներուն:

Նոյն առաւօտ հասած էր Նաբոլի՝ ծո-
վային ճամբով, մեկնած ըլլալով Պոլսէն,
և ճեպընթացով երեկոյեան Ծին կը հասնէր
Վենետիկ: Կայարանին մէջ զիմաւորելու
գացած էին Միաբանութեան Ընդհ. Աբ-
բահայրը՝ Գերպ. Սրապիոն Վ. Ուլուհոճ-
եան, խումբ մը վանքի ծերագոյն ՎՎ.
Հայրերէն, Փարիզի, Հալէպի և Աղեքսան-
դրիոյ Մխիթարեան վարժարաններու Տես-
չական մարմինները, քաղաքին Պատրիար-
քական կղերանոցին ներկայացուցիչը,
ոստիկանութեան կողմէ բարձրաստիճան
անձեր և բազմաթիւ ազգայիններ՝ ըլլալ
վենետարեակ, ըլլալ նաեւ հիւրեր որոնք
եկած էին հանգէսներուն մասնակցելու:

Ս. Ղազարի մուտքին՝ մոմերով ու շուր-
ջառով թափօր կազմած, «Հրաշափառ»ով
կ'ընդունուի Գերբ. Վ. Սեմ. Հոգեւոր Տէրը
և կը յառաջանայ դէպի եկեղեցի, ուր
աւագ խորանի բեմին առջեւ՝ Մխիթար
Աբբաճոր խնկելի դամբանին վրայ աղօ-

թելէ յետոյ, կ'առաջնորդուի վեհարան.
հոն Ուխտիս Ընդհանուր Աբբահայրը կը
կատարէ նախողջոյնի ուղերձը յանուն
բովանդակ Միաբանութեան, ու Ծիր. Ա-
ղաճանեան յուզումով կը պատասխանէ:
Վսեմ. Հոգեւոր Տիրոջ կ'ընկերանային
Պատրիարքական փոխանորդ՝ Գերպ. Լ.
Արք. Պաթանեան, և Հոռոմի Քննչապետ.
Վարժարանի Մեծաւոր՝ Գերպ. Պետրոս
Արք. Քէտրճեան:

Յաջորդ առաւօտն իսկ Վենետիկի Պա-
տրիարքը՝ Գերպ. Քարլոյ Արք. Ակոսթինի,
կը փութայ դէպի Ս. Ղազար, ողջունելու
մեր Գերբ. Հոգեւոր Տէրը, որ փոխա-
դարձ այցելութեամբ՝ կէսօրէ վերջ կը
մեծարէ Վենետիկի Հոգեւոր Պետը:

Միւս օրերուն եւս, երբ հանդէսներ և
արարողութիւններ չկային, Հոգեւոր Տէրը
և ընկերացող Գերապայժառները, Վենե-
տիկի ծովակալութեան տրամադրած շոգե-
մակոյկով առաջնորդուեցան դէպի Վենե-
տիկի շրջակայ գեղեցիկ վայրերը, Մու-
րանոյ, Պուրանոյ, Թորչելլոյ, աւելի
հեռուն՝ Ազոլոյ, Ս. Զենոն և Ռիւզէ:

ՈՒԽՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՄՈՒՆՋՆԵՐ

Սեպտեմբեր Տին, ուրբաթ օրը, Միա-
բանութեան հիմնադրութեան տարեդար-
ձին՝ մինչ սկիզբ կ'առնէր Միաբանութեան
250-րդ տարին, սկսան նաեւ հանգէսները,
նոյն օրը հանդիսաւոր ծայնաւոր պատա-
րագ կատարեց Գերպ. Լ. Արք. Պաթան-
եան: Դպիրներու խումբը բազմաձայն
երգեցողութեամբ՝ խունկի անոյշ բոյրին
հետ կը համակէր եկեղեցին:



Ն. Վ. Տ. Ծիր. Գրեգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան

Կաթողիկոս - Պատրիարք Տանն Վիլիկիոյ

Առանձին գահի վրայ կը բազմէր Ծի-
րանեփառ Հայրապետը՝ Կարդ. Աղաճան-
եան, իր շուրջն ունենալով բոլոր եպիս-
կոպոսներն ու վանքի հայրերը:

Կէսօրին կը հասնէր նաեւ Գերպ. Ներսէս
Արք. Թայրոյեան՝ Պաղատաւի թեմական
եպիսկոպոսը:

ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Միեւնոյն օրը, կէսօրէն վերջ Ս. Ղա-
զար կը ժամանէր նաեւ Պոլսոյ Մի-

րանաւորը՝ Կարդինալ Յովհ. - Մկրտ.
Արքեպիսկ. Նազալի-Ռոքքա տի Քոռնե-
լիանոյ, իր բարտաւարին և զիւանապե-
տին հետ. բացառիկ էր այցելութիւնը և
շատ յուզիչ ողջագուրումը երկու ծիրա-
նաւորներուն՝ վանքի քարափին:

Մխիթար Աբբաճոր շերիմը դարձած էր
այն կեդրոնը ուր կը միանային Արեւելքի
և Արեւմուտքի բարձրաստիճան եկեղեցա-
կանները և իրենց հետ՝ անթիւ ժողովուրդ,
ամէնքն ալ սիրոյ և եղբայրութեան զրօ-

շին ներքեւ արձանագրուած, հետեւող Մխիթար Արքայապետի վեհ հոգիին և օրինակին:

Յաջորդ առաւօտ, Սեպտեմբեր 9-ին, Մխիթար Արքայապետ շիրմին վրայ հանդիսաւոր թիւ պատարագ մատուցեց Պուշնիայի Ծիրանաւորը, բոլոր միաբան Հայերու ներկայութեան:

Կէսօրին, երկու կարգի նախնայաւորներու նախագահութեամբ, հայ և օտար ուրիշ բարձրաստիճան հրաւիրեալներու, քաղաքական ու զինուորական պետերու մասնակցութեամբ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը, որու միջոցին կարգապահական անթիւ շնորհաւորական հռոպիրներ, իտալական Հանրապետութեան Նախագահէն ու վարչապետէն, հայ և օտար եկեղեցական ու կրօնական անձերէ և հաստատութիւններէ, քաղաքական ներկայացուցիչներէ և բարեկամներէ:

ՀԻՄՆԵՐ ԵՒ ՀՐԱՄԱՐՈՒՄՆԵՐ

Ամէնէն մեծ հանդէսը վերապահուած էր կիրակի օրուան, Սեպտեմբեր 10-ին: Արդարեւ Ս. Ղազարու մենաստանը հազիւ երբեք տեսած է այնքան բազմութիւն, որքան այդ օրը. առտուն կանուխէն, Լիւտոյէն ու Վենետիկէն կոնտրոլներով ու շոգենաւերով հարիւրաւոր հայ և օտար ուխտաւորներ կը փութային զէպի Հայոց վանքը: Օր առաջ արդէն տեղական ու իտալական մամուլը արձանագրած էր մեծ եղելութեան և հանդէսներուն թուականն ու մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ Մխիթար Արքայապետ կեանքին ու գործին մասին գրած՝ մեծ գովեստներով ու դրուատիքներով:

Աշխարհի ամէն կողմերէն Հայեր փութացած էին հանդէսներուն մասնակցելու, ուխտաւորներու խումբերու նման հասած էին կարաւաններ յաճախ վարդապետի մը առաջնորդութեամբ՝ Փարիզէն, Վալանսէն, Լիոնէն, Մարսիլիայէն, Վիէննէն, Պրիւք-

սէլէն, Պէյրութէն, Ճիպոթիէն, Հալէպէն, Ալեքսանդրիայէն, Գահիրէն, Պոլսէն, Աթէնէն, Պարսկաստանէն, Ամերիկայէն: Իսկ իտալոյ՝ զրեթէ բոլոր քաղաքներէն, առաւելապէս Միլանէն: Չէին պակսեր արտասահմանի մէկ քանի թերթերու ներկայացուցիչներ ալ. բազմաթիւ թղթակիցներ եւս տեղական իտալական մամուլին:

Այդ օրերուն Ս. Ղազար իսկապէս Հայաստան մը դարձած էր. արդէն իտալացիները յաճախ այդպէս կը կոչեն Վենետիկի լճակին այդ գոհարը:

ԱՂՕԹՔ, ԽՈՒՆԿ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Առաւօտեան ժամը 10-ին պիտի սկսէր Ս. Պատարագը. վաղից եկեղեցին ծայրէ ծայր լի էր հաւատացեալներով. արտաքին գաւթներուն և կամորակապ սրահներուն մէջ ալ բարձրաստիճաններով կը հաղորդէր սուրբ արարողութիւնը:

Առաջին ամիսներուն վրայ բազմած էին Վենետիկի Նահանգապետը, Ծովաւալը, Ոստիկանապետը, Քաղաքապետին ներկայացուցիչը, Ֆրանսական Հիւպատոսը՝ պաշտօնական համազգեստով իրեն ներկայացուցիչ Ֆրանսական կառավարութեան:

Պատարագիչն էր Վսեմ. Գերբը. Հոգեւոր Տէրը, Ծիր. Աղաճանեան. Զգեստաւորութիւնը վեհաբանին մէջ կատարուեցաւ. մամուլը և գաւազանակիր զոյրներ անջնէն կ'առաջնորդէին թափօրը, ապա բոլոր Վ. Հայերը, տասը սարկաւազները՝ ոսկեճամուկ ամենաթանկագին զգեստներով, չորս Գերապայծառները զգեստաւորուած՝ ճոխ թագերով, հուսկ պատարագիչ Հայրապետը՝ մութ կապոյտ ոսկեղրուազ ասղնեգործ շքեղ շուրջառով, երկիւղած ամիսիութեամբ կը յառաջանար, կ'իջնէր մեծ սանդուխէն, կ'օրհնէր բակի ժողովուրդը. «Այսօր տատուածութիւն», «Հրաշափառ» շարականներու

երգը ալիք ալիք կը տաւածուէր ժողովուրդին մէջ, բերնէ բերան: Եկեղեցի մըտնելուն, սկսաւ բազմաձայն խմբերգը՝ Կոմիտասեան ըզմայլելի «Խորհուրդ խորին»-ով. ինչ անոյշ կը լսուէր «նազելի փառք զգեստաւորեցիր ի դրախտն Աղնի, տեղի բերկրանաց... մարդն անմահացաւ՝ զարդարեալ ի զգեստ անկողոյսեւ...»:

Թափօրին կը հետեւէր Փարիզի Պապական Նուիրակը՝ Գերպ. Ռոնքալլի Արքեպիսկ. և ուրիշ վենետիկցի բարձրաստիճան եկեղեցականներ, արտասահմանէն եկած բազմաթիւ հայ վարդապետներ:

Պատարագը կը յառաջանար մոմերու և լոյսերու փայլին մէջ, վեհ ու հանդիսաւոր. երգեցողութիւնները, եռաձայն և քառաձայն, յաջորդութեամբ կատարուեցան. Կոմիտասեան ու Եկմալեան քաղցր եղանակներուն հետ յաճախ կը լսուէին Ս. Ղազարու յատուկ երգեր, ներդաշնակօրէն յարմարեցուած միւսներու ընթացքին ու տարողութեան, ընդելուզուած մարգարտներու նման:

Աւետարանի ընթերցումէն վերջ կարդացուեցաւ Սրբազան Քահանայապետին ինքնագիր շնորհաւորական կոնդակը, զոր հաճած էր ուղղել Միաբանութեան՝ այս նուիրական յիշատակին առթիւ, ամէնուն շնորհելով իր առաքելական օրհնութիւնը:

Մխիթար Արքայապետը դամբանին վրայէն կը բարձրանայ, կ'ամպանայ գոհարանական խոնկը, ամբողջ ժողովուրդին մասնակցութեամբ, շատեր յուզուած աղօթք կը մըմջեն, զպիւրներու երգին հետ կ'ա-




ՎՍԵՄ. ԳԵՐԵՐԶ. ՀՈԳԵՒՈՐ ՏԵՐԸ
Ս. ԱՆՏԱՐԱՐԱՆԻ ԸՅԹԵՐԳՄԱՆ ԱՎՈՐՈՄ

ղերսին խաղաղութիւն աշխարհի, արքայութիւն ննջեցեալներու, սրբութիւն հոգիներու և պայծառութիւն Մխիթարեան յարկին:

Բազկատարած կ'աղօթէ Հայրապետը, ինչպէս երբեմն Մեծն Ներսէս՝ Նպատ լեռան զապաթին. կը հնչէ Կոմիտասեան երկնաչու «Քրիստոս ի մէջ»-ը, Եկմալեանի հրեշտակային «Սուրբ սուրբ»-ը, Խիւրանոյշ «Յամենայնի»-ն. կը հրճուի Մխիթար երկինքէն իր յաջորդներուն երկհարիւրամեայ վաստակներով, նոր ոյժ, կորով և օրհնութիւն տեղաւով ամէնուն վրայ:

Գոհարանական իղձերը յաղթական ընթացք մը կ'առնեն յաջորդաբար և տաճարին գմբեթաւ կամարներէն անդին կ'անհետան «Ամէն. Եղիցի»-ի սլացիկ ձայններով:



ԸՆԹԵՐՑՈՒՄ ՎԵՐՋԻՆ ԱՆԵՏՈՐԱՆԻ

« Էր լոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ զալոց է յաշխարհ »:

Պատարագէն վերջ բարձրաստիճան հիւրերը առանձնաբար շնորհաւորեցին և ողջունեցին Հոգեւոր Տէրը, մինչ միւս ազգայինները զրեթէ ժամ մը եւս մնացին վանքի պարտէզին մէջ, զուարթ ու ոգեւից խօսակցութեամբ զբաղած, յիշատակի լուսանկարներ կատարելով:

ՍԻՆԱՍՏԱՐԻ ՍՐԱՆԻՆ ՄԷՋ

Նոյն օրը կէսօրէ վերջ ժամը 5ին, Վեհտիկի ամէնէն շքեղ դահլիճներէն Քաճիւթիւնի հանգիստի Տալա դը Կոլոնն-ի մէջ տեղի ունեցաւ փակման մեծ հանգեսը:

Լի էր ընդարձակ սրահը, բացի առաւօտեան պատարագին ներկայ եղող բարձրաստիճան հիւրերէն կամ անոնց ներկայացուցիչներէն, հանդէսը կը պատուէին նաեւ քաղաքին կարգ մը եկեղեցական

Երեսփոխան Փրոֆ. Փ. Լիզլէ, որ պատկերացուց Մեծ Սերաստացիին դէմքը և գործը. գովեց Վեհտիկի հին Հասարակապետութեան այն ազնիւ կարգադրութիւնը՝ որով առանձին կղզեակ մը շնորհած է պանդուխտ Մխիթարի և անոր աշակերտներուն: Ապա նմանցուց Մխիթար Արքայաւորը Ս. Օդոստինոսի, Ս. Թոմասի և մեր օրերու Տօն Օրինէի, որոնց կեանքի ու գործունէութեան նման գիծերը շեշտեց և բանաստեղծօրէն փառաբանեց:

Արտասահմանէն եկած մտաւորականներու անունով խօսեցաւ Պր. Հրանտ Սամուէլ (Փարիզէն) որ ոգեւորիչ շեշտով զրուատեց Մխիթարի գործելակերպն ու վաճառակը՝ ազգային, կրթական, գրական ու կրօնական տեսակէտներով. վերջացուց իր խօսքերը ըսելով. « Անմահ է Մխիթար

նուիրակներ, երեսփոխաններ, քաղաքական և զինուորական անձեր, մշակութային — գիտական — գեղարուեստական կաճառներու անօրէններ ու վարիչներ. մէկ խօսքով՝ Վեհտիկի ընտրանին: Թիւ չկար հանդիսավայր խուժող մեր ազգայիններուն:

Բացման ճառը խօսեցաւ Միաբանութեան Ընդհ. Արքայաւոր, Գերպ. Սրապիոն Վ. Ուլունճեան՝ խաղերէն լեզուով խորին շնորհակալութիւն յայտնելով Արք. Քահանայապետին, իտալական Կառավարութեան պետերուն և անոնց ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ բոլոր հանդիսականներուն որ փութացած էին պատուելու Մեծն Մխիթարի յիշատակը:

Առջին բանախօսն էր

և հայ ժողովուրդը յաւիտեան երախտապարտ է իրեն »:

Մուրաւ Ռաֆայէլեանի նախկին սաներու կողմէ խօսեցաւ իտալահայ Մշակութային Միութեան Նախագահ՝ բանաստեղծ Բժ. Արամայիս Սրապեան, ու ներշնչուած բառերով հակիրճ ներբող մը հիւսեց յիշատակին:

Պէյրութի « Մասիս »-ին կողմէ խանդավառ ուղերձ մ'ալ կարդաց Պր. Հրաչ Քաջարեան ու ջատագովեց Մխիթարը՝ վերջին շրջանիս զրուած մէկ քանի խճճանքներու պատասխանելով. կուռ էր և համոզիչ շեշտով:

Հանդէսին Բ. մասին մէջ խաղերէն հիանալի ճառ մը կարդաց նոյնինքն Հոգեւոր Տէրը՝ Ն. Վ. Ծ. Կարգինալ Աղաճանեան. վարդապետա-

կան հեղինակութեամբ ան ներկայացուց Մխիթարի ուղղափառ կաթողիկէ հաւատքն ու համոզումը՝ պատմական, դրական անսխալ տուեալներով. վերլուծեց Մխիթար Արքայաւորի կեանքն ու գործունէութիւնը, փաստացիօրէն և միաժամանակ հաճելի համադրութեամբ ցոյց տալով մեծ Սերաստացիին անդրդուելի յարումը կաթողիկէ եկեղեցւոյ, հաւատք և համոզում՝ որ կը բխին հին և նախնի մեր լուսաշող հայրապետներու հոգիէն՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Սահակի, Նարեկացիի և Ս. Ներսէս Շնորհալիի սրտէն:

Գեղարուեստական բաժնին մէջ փայլեցաւ Փատովայի « Թարթինի » նուագախումբը՝ ղեկավարութեամբ երաժշտագէտ Արրիկոյ Փէտրուլլոյ-ի: Մեծ յաջողութեամբ նուագուեցաւ Գ. Ալէմշահի « Հէրեաթ »-ը. ապա « Սուր Մխիթար »-ը՝ հեղինակութիւն ղեկավար երաժշտագէտին:



ՍԻՆԱՍՏԱՐԻ ՍՐԱՆԻՆ ՄԷՋ ԽՈՒՌՆ ԲԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ՓԱՌԱՌՈՐԷ ՄԽԻԹԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԸ

ներշնչուած ու յօրինուած Մխիթար Արքայաւոր հինգ եղանակներուն վրայ, որոնք ցարդ աւանդաբար կ'երգուէին Ս. Ղազարի մէջ:

Ընդհանուր խանդավառութեան մէջ փակուեցաւ հանդէսը: Յաջորդ առաւօտն իսկ իտալական թերթերը մանրամասն տեղեկութիւն կու տային հայրապետական պատարագին և հանդէսի մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՏՈՒՑԱՀԱՆԳԻՆ

Սեպտեմբեր 8-12 օրերուն երեք ցուցահանդէսներ կազմակերպուած էին վանքի դահլիճներուն մէջ: Առաջինը՝ յատկացուած էր Մխիթար Արքայաւորի յիշատակին: Դարաններու մէջ, ապակիներու տակ կը նշմարուէին Մխիթար Արքայաւոր գործածած իրեղէնները, կապան, փիլոնը, վեղարն ու զղակը, վերմակը, հողաթափը,



ՀԱՅԿԱՍՏԱՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԸ «ՍԻՆԱՋԱՐԻ ԴԱՆՈՒՅԻՆ»-ԻՆ ՄԷՋ

մօրուքն փունջ մը, անձնական կնիքն ու ջրախոտի տուփը: Ուրիշ զարանի մէջ զետեղուած էին ձեռագիր աշխատանքները, նամակներու հաւաքածոն և հրատարակութիւնները: Հոգեհաճ մատենաներ, քերականութիւն, քրիստոնէական, մեկնութիւններ եւն...: Կեդրոնը զրուած էր Մխիթար Արքայի զսասանդութեան գահը և Տրամօր այն նկարը՝ որու տաշիւ

ըրզի (1634), Նոր Զուգայի (1640), Լիւփոնայի (1643, հայերէն սաղմոսարան մը, որ Լիւփոնայ քաղաքին մէջ տպուած առաջին գիրքն է), Ամստերդամի (1665), Մարսիլիայի (1673) տպագրութիւնները: Տպագրական նմոյշներ զրուած էին իւրաքանչիւր քաղաքէ մինչեւ 1750 թուականը: սաղմոսարաններ, քերականութիւններ, բառարաններ, ժամագիրքեր, պա-

տղութիւն տաշուհ, Սեանի վանքին մէջ, երեւցած է իրեն Ս. Սատուածածին: Այդ նկարը սակայն բնագիրը չէ, այլ օրինակութիւն մը զոր Խրիմեան Հայրիկ պատրաստել տուած է և Ս. Ղազար զըրկած 1901/ին, վանքի հիմնարկութեան 200-ամեակին:

Երկրորդ ցուցահանդէսը հայ տպագրական արուեստի առաջին նմոյշները կը ներկայացնէր. վենետիկի Աղթարները և Ռերթմազիրը (1513), ապա Միլանի (1624), Հոմի (1630), Փա-



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱՆ ԼԷՋԻՆ ԿԸ ԽՈՍԻ



ՀՈԳԵԼՈՐ ՏԵՐԸ ՀԱՌԻ ՄԷՋՈՑ

տարագամատոյցներ, պատմական զրքեր, թարգմանութիւններ եւն...: Գրքեր որոնք թիչ անգամ և թիչ տեղեր կրնան ցուցադրուիլ հայ ժողովուրդին:

Երրորդ ցուցահանդէսը՝ ձեռագիրներու և մանրանկարչական արուեստի նմոյշներ էին. զլիսաւորաբար Աւետարաններ՝ 902 թուականէն սկսած մինչեւ 1650ի շրջանը, զմայլելի գունագեղ և ոսկինկար խորաններով և լուսանցազարդերով պնդուած: Ամէն մէկ ձեռագիր կարելի էր օրերով զիտել և հիանալ իւրաքանչիւր էջի մեծ ու փոքր նկարներով, որոնք ակնյայտի կը մատնանշեն մանրանկարչական զանազան դպրոցներու արուեստն ու կատարելագործումը:

Հայեր և օտարներ, մասնագէտներ և հետաքրքիրներ մեծ գաղափար կազմեցին այն օրը հայ ազգի գրական ու գիտական փառաւոր վաստակներուն վրայ. շատեր մանրամասն հարցումներ կ'ուղղէին բացառող վարդապետներուն և զմայլանքի ու շնորհաւորական զգացումներով կը հեռանային Ս. Ղազարէն:

ԱՆՀԵՏԱՅՈՂ ԺՊԻՏՆԵՐ...

Սեպտեմբեր 12ին առաւօտ սիրախառն հրաժեշտի ողջոյններով՝ Վսեմ. Գերբեջ. Հոգեւոր Տէրը յուզումով կը մեկնէր Ս. Ղազարէն:

Արեւը հազիւ բարձրացեր էր վանքի կողմերէն վրայէն, զուարթ երկինք էր. վանքի մայր դրան առջեւ Ուխտիս Ընդհ. Արքայայրը շնորհակալութեան ու զերծ մ'ալ կատարեց՝ որուն պատասխանեց Հոգեւոր Տէրը, օրհնեց Միաբանութիւնն ու անոր գործունէութիւնը:

Հոն հաւաքուած էին նաեւ վանքի բոլոր աշակերտները. Հոգեւոր Տէրը զանոնք ալ մէկիկ մէկիկ քաջալերեց և օրհնեց:

Լճակի խաղաղ ալիքներուն մէջ երկար հետք թողուց անհետացող շոգեմակոյկը. վերջին ողջոյնն էր, որ կու գար հեռուէն քսուելու վանքի նորաշէն պարիսպին՝ որ կը բարձրանար...:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԱՆ

Ս. Ղ. Ա.

Լուսանորոգն Մխիթար Արքայի մահուան երկրորդ դարադարձին առիթով (1749-1949 Սպրիլ), Սուրբ Ղազարու Հայկական Ճեմարանը մտադիր է ի լոյս ընծայել Մեծ Սեբաստացիին թղթակցութիւնները: Մեր կրօնական և գիտական ազգային հիմնարկութիւնները, ինչպէս նաեւ ուսումնասէր և ազգասէր հայրենակիցներ, որոնք տեղեակ են մեր վերածնունդի այս մեծ Հեղինակին վաւերական ստորագրութիւնը կրող ցիրուցան պատառիկներուն, հրաւիրուած են ազնուօրէն զեկուցանել յիշեալ Ճեմարանին, նպաստելու համար մշակութային այս կարեւոր ձեռնարկին լուսադոյն յաջողութեան:

Կը խնդրուի Հայ Մամուլի Անկախացողիչներէն արտասուպէլ այս ազդը:

Ս. Ղազար

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՃԵՄԱՐԱՆ